Արձանագրություն N 4
ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 21 մարտի 2019թ.
ժամը 11:45

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գ. Մարտիրոսյանը

անդամներ՝ Մ. Ստեփանյանը, Ռ. Հարությունյանը, Դ. Դալլաքյանը

քարտուղար՝ Ա. Մկրտչյանը

<u>I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին</u>
(Գ. Մարտիրոսյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 19.03.2019թ. կայացած ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստով արձանագրել է (Արձանագրություն N 3), որ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ենթակա են շտկման և որոշել է (Արձանագրություն N 3-ի 2-րդ կետ) մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19 կետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած Ա/Ձ Ջանիկ Սևոյանին, առաջարկելով ծանուցումն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

1.2 19.03.2019թ.-ին Ա/Ձ Ջանիկ Սևոյանը ծանուցվել է և ծանուցմանը կից նրան է ներկայացվել ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 19.03.2019թ. N 3 արձանագրությունը, որին ի պատասխան Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից 20.03.2019թ.-ին ներկայացվել է միայն ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի N 5 Հավելվածի ձևաչափին համապատասխան տարբերակը և իր պարզաբանումները գրության ձևով՝ ի պատասխան ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների:

1.3 Հանձնաժողովը ուսումնասիրեց Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից ներկայացված վերոնշյալ պատասխան գրությունը և արձանագրեց, որ գրությանը կից չի ներկայացվել վերաբերելի որևէ փաստաթուղթ, որը հիմք կտար որպես պատշաճ գնահատել Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից պայմանագրի կատարումը և հիմնավորեր, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ» N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ) պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված ծառայությունը իր կողմից մատուցվել է սահմանված ժամկետում (պատշաճ)՝ դա հավաստող ակտ կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում (կամ այլ նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) պատճեններ):

1.4 Սույն թվականի մարտի 19-ին ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը ի պատասխան 18 մարտի 2019թ. գրության ստացել է ՀՀ ԱՆ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գրությունը, որն ուսումնասիրվեց ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից սույն նիստի ընթացքում:

1.5 Հանձնաժողովը համաձայն «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերոնշյալ գրությամբ հայտնված այն տեղեկատվության, որ՝ «Միաժամանակ հայտնում ենք, որ մատակարարման ժամկետները 16 (տասնվեց) օր խախտելու համար հաշվարկվել է տույժ և ուղարկում ենք վճարման թիվ 573 հանձնարականի պատճեն» և կից ներկայացված թիվ 573 վճարման հանձնարականի ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական

կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև կնքված Պայմանագրով նախատեսված ծառայությունը մատուցվել է սահմանված ժամկետի խախտմամբ (16 (տասնվեց) օր):

2. Հանձնաժողովը վերոգրյալով պայմանավորված և ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 12.03.2019թ. թիվ 2, 19.03.2019թ. թիվ 3 արձանագրությունների համաձայն և համապատասխան փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրեց, որ.

2.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանը ծանուցվել է և նրա կողմից 15.03.2019թ. ուղարկվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2.2 Կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից գնահատվել է Ա/Ձ Ջանիկ Սևոյանի «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը:

2.3 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք չեն համապատասխանում Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի՝ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար պահանջին՝ այն է, «***61. Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ ... 2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը. ...»***:

2.4 Կարգի 47-րդ կետի համաձայն՝ 19.03.2019թ. Ա/Ձ Ջանիկ Սևոյանը ծանուցվել է՝ արձանագրված անհամապատասխանությունները մեկ աշխատանքային օրում շտկելու մասին, որին ի պատասխան Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից որպես շտկված տարբերակ ներկայացվել է վերոնշյալ թիվ 5 Հավելվածը շտկված ձևով և գրություն, որի բնույթից ելնելով, այն Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների շտկում չի կարող համարվել, քանի որ գրությամբ իր իսկ կողմից մատնանշված հանգամանքները՝ Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից 15.03.2019թ. ներկայացրած Պայմանագրում, ներառյալ դրան կից փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունների և այդ պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներից առհասարակ չի բխում՝ այն է, «... *չի ներկայացվել տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝* ***պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի*** *(հանձնման-ընդունման արձանագրություն և այլն)* ***պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը***. ...», ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի վերոնշյալ գրությունը հավաստում է Ա/Ձ Ջանիկ Սևոյանի կողմից պայմանագրով նախատեսված ծառայության ժամկետների խախտմամբ մատուցված լինելը:

3. ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 12.03.2019թ. թիվ 2 արձանագրությունով Ա/Ձ Մանվել Ջալավյանը ճանաչվել էր 1-ին չափաբաժնի համար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

<u>II. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին</u>

(Գ. Մարտիրոսյան)

1. Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1.1 Առաջնորդվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով, այն է՝ «48. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ ... 2) չշտկելու

դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին»,

ա) մերժել առաջին տեղ զբաղեցրած Ա/Ձ Ջանիկ Սևոյանի հայտը,

բ) հաջորդաբար տեղ զբաղեցրած Ա/Ձ Մանվել Ջալավյանին ծանուցել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

1.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ա/Ձ Մանվել Ջալավյանի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.3 Կարգի 45-րդ կետի համաձայն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Ա/Ձ Ջանիկ Սևոյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

2. Հաջորդ նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:45-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 24, 1-ին մասնաշենք, N204 սենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ. Մարտիրոսյան

անդամներ՝ _____ Մ. Ստեփանյան

_____ Ռ. Հարությունյան

_____ Դ. Դալլաքյան

քարտուղար՝ _____ Ա. Մկրտչյան